արծարծումը։ Ըստ հավատալիքների մկրտությունը հաղորդեց Քրիստոսին այն զորությունը, որը նա այնուհետև ցուցաբերեց իր հրաշագործ գործունեությամբ և քարոզչությամբ։

Դրդդարանչ։ Եթե Ջրօրհնյաց ծիսակատարությամբ նորոգվում էր շրի կենսատու զորությունը, մի այլ ծիսակատարությամբ նորոգվում էր կրակի նույնպիսի զորությունը։ Դա տեղի էր ունենում Դրդդարանչի օրը։ Շատ նախնական մտածողությունից եկող այդ օրը, որը ձևափոխելով եկեղեցին, հարմարեցրել է Տեառնընդառաջին՝ օգտվելով Քրիստոսի մանկության մասին ավանդված պատմությունից[17]։ Տոնը կատարվում էր փետրվարի 14-ին երեկոյան, այսինքն՝ ծննդից 40 օր անց։ Այստեղ նախ պետք է ընդգծել, որ ավանդությունն օգտվել է այն ժողովրդական սովորությունից, որը պահպանվում էր մինչև վերջին ժամանակներս Հայաստանի կենցաղի մեջ և պահանջում էր ծննդկանից քառասունք պահելը։ Մյուս կողմից անհնարին է այդ հրավառության արարողության մեջ չտեսնել նրա միջոցով ցցուն կերպով արտահայտված մագիկ զոհողություն, որով նորոգվում էր կրակի արդեն ուժասպառ եղած զորությունը և իսկույն օգտագործվում էր այդ նորոգված զորությունը։ Ահա մի բան, որի հետքը չկա Քրիստոսին տաճար ներկայացնելու և Սիմոն ծերունու նրան դիմավորելու ավետարանական ավանդության մեջ։ Այդ երեկո խարույկ վառելու սովորությունը տարածված էր ամենուրեք հայկական շրջաններում։ Մի քանի գավառներում այն պարզապես կոչվում էր դ՝ զ, Կարնո գավառից վերաբնակված հայերի մեջ Դէրնաս՝ Խանչալի գյուղ։ Այդ սովորությունը թափանցել է Վրաստանի հայաբնակ վայրերը և այնտեղ, օրինակ՝ Տփղիսում, կոչվում է Ճիակիօլա։ Իր մանրամասնություններով նա հիշեցնում է Հունաստանում տաճարի կրակից տան կրակի զորությունը վերականգնելու ծիսակատարությունը։ Այդ մագիկ միջոցառումով նորոգվում էր նաև կրակի հետ արևի ջերմատու զորությունը և ապահովվում էր ապագա առատությունը։

Որպես հունական աշխարհում, նույնպես և հայկական գավառներում, մասնավորապես Զանգեզուրում, ծիսակատարության հիմնական մասը կազմում է տաճարում վառած կրակով դեղի բոցավառումը և այդ դեղից տներում կրակի նորոգումը։ Այդ ծեսի բովանդակությունը Զանգեզուրի զանազան գյուղերում տարբեր հավելացումներով է բարդացել։ Այսպես, Խնձորեսկում[18] մեկը, ամենից շատ վճարողը, որը սակայն պիտի լինի անպատճառ այդ տարվա նորապսակներից մեկը, եկեղեցում վառում էր աշտանակի վրա տնկած 12 մոմերը։ Ժամվորներն այդ մոմերից վառում էին իրենց ձեռքի մոմերը և առանց հանգցնելու հասցնում էին իրենց տները՝ այնտեղ ճրագը կամ կրակը վառելու համար։ Այլ գյուղերում պահպանվել էր ավելի ամբողջական բարդ ձևը՝ եկեղեցում վառած մոմերով վառում էին եկեղեցու բակում սյունանման կիտած դեղը։ Այդ դեղը կիտում էին այդ տարվա նորապսակները[19], դրա համար բե-

---

[17] Կան հակառակ պնդումներ, որ Դրդդարանչ բառը մի աղավաղում է Տեառնընդառաջի։ Սակայն աչքի առաջ ունենալով այդ օրվան հետ շաղկապված սովորությունները, որոնք ոչ մի կապ չունեն ավետարանական պատմության հետ, թվում է, թե ավելի ընդունելի պիտի համարվի մեր բացատրությունը։ Տե՛ս M. Abegian, Der armenische Volksglaube, Leipzig, 1894, էջ 372։

[18] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 107։

[19] Գորիս։